

Մամլոյ Հաղորդագրութիւն

Հ.Բ.Ը.ՄԻՈՒԹԻՒՆԸ ԿՐ ՄԻԱՆԱՅ «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԴՐԱՄԱՀԱԻԱՔԻ ԿՈՉԻՆ ՅԱՆՈՒՆ ԱՐՑԱԽԻ

30 Սեպտեմբեր 2020

Անմիջապէս Հրատարակութեան Համար

Յանուն Արցախի եւ Հայաստանի պաշտպանութեան սուր ռազմական տագնապին, եւ յօգուտ վտանգի ենթակայ անձնաց արդիւնաւէտ օգնութիւն եւ աջակցութիւն մատակարարելու, Հ.Բ.Ը.Միութիւնը կը միանայ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի յայտարարած արտակարգ դրամահաւաքի համազգային արշաւին: Բոլոր նուիրատուութիւնները պիտի կատարուին անմիջապէս Հիմնադրամին, որ Հայաստանի կառավարութեան կողմէ 1990-ականներու սկզբնաւորութեան հիմնուած տրազերծ կազմակերպութիւն մըն է աշխարհի տարածքին գործող իր մասնաճիւղերով:

Հ.Բ.Ը. Միութիւնը կոչ կ'ընէ իր աշխարհատարած անդամակցութեան, բարերարներու, նուիրատուներու, աջակիցներու եւ համակիրներու ցանցին իրենց առատաձեռն նուիրատուութիւնները անմիջապէս եւ ուղղակիօրէն կատարելու առցանց «Հայաստան» Համահայկական Հիմնադրամին՝ www.himnadram.org կայքով: Միացեալ Նահանգներու մէջ տրազերծ նուիրատուութիւններու համար այցելեցէք www.armeniafund.org կայքէջը:

Միեւնոյն ատեն, Հ.Բ.Ը.Միութիւնը պիտի շարունակէ մարդասիրական եւ բժշկական օգնութեան ընթացիկ ծրագիրները, որոնք կը համակարգուին Հայաստանի Հանրապետութեան Պաշտպանութեան նախարարութեան հետ՝ «Հ.Բ.Ը.Մ.-Ը Յանուն Արցախի» երկար ժամանակէ ի վեր գործող հիմնադրամին միջոցով:

Յաւելեալ տեղեկութիւններու եւ մանրամասնութեանց համար կը խնդրենք կապ հաստատել Հ.Բ.Ը.Միութեան տեղւոյն Շրջանակներու կամ Մասնաճիւղերու, Հ.Բ.Ը.Մ. Հայաստանի, կամ Նիւ Եորքի Կեդրոնական գրասենեակին հետ:

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը (Հ.Բ.Ը.Մ.) աշխարհի մեծագոյն ոչ-շահամէտ հայկական կազմակերպութիւնն է, նուիրուած հայեցի ինքնութեան եւ ժառանգութեան պահպանումին եւ մշակումին՝ կրթական, մշակութային եւ մարդասիրական ծրագիրներով: Միութեան գործունէութիւնները բարերար ազդեցութիւն կը բերեն տարեկան 500,000-է աւելի անձերու կեանքերէն ներս, Հայաստանի ու Արցախի մէջ եւ Սփիւռքի տարածքին: Իր հիմնադրութենէն ի վեր, Հ.Բ.Ը.Մ.ը հաւատարիմ մնացած է համայն հայութեան

բարօրութեան ապահովումին ուղղուած իր գլխաւոր առաքելութեան: Յաւելեալ տեղեկութիւններու համար՝
այցելեցէք www.agbu.org կայքէջը:

Յաւելեալ Տեղեկութեանց համար - Կապ

AGBU Press Office

55 East 59th Street

New York, NY 10022-1112

Phone: 212.319.6383

Email: communications@agbu.org